

Արձանագրություն N 2

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ
նիստի

Ներկա էին՝

Նախագահությամբ՝ Պավել Սաֆարյանի

խորհրդի անդամներ՝ Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը,
Կարեն Միրզաբեկյան, Աբգար Մկրտչյանը և Էմին Աբգարյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Իսախանյանը, Արթուր Մկրտչյանը, Արման Ավետիսյանը,
Արարատ Սարգսյանը, Տարոն Հակոբյանը:

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան:

Օրակարգում քննարկման ենթակա հարցեր՝

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին:
2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017 թվականի ընթացքում
կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:
Զեկուցող՝ Լ.Իսախանյան
3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. Երկրորդ
կիսամյակի հաշվետվություն:
Զեկուցող՝ Ա.Սարգսյան:

Լսեցին՝

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին:

Ձեկուցող՝ Լևոն Խալիկյանը ներկայացրեց նախորդ նիստի ընթացքում տրված հանձնարարականներից տեսչական մարմնի 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանը, Կարեն Միրզաբեկյանը, Էմին Աբգարյանը:

Առաջարկվեց՝ 8-րդ կետը՝ վերախմբագրել և հաստատել հետևյալ բովանդակությամբ՝ Օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով *առաջարկվել են* մշակել օրենսդրական ակտեր:

Որոշվեց՝ Հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

Կողմ – 7:

Դեմ – 0:

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. երկրորդ կիսամյակի հաշվետվություն:

